ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2016 թվականի N 88-Ա

«ԽՈԶՆԱՎԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 34-րդ կետով և համաձայն <<Խոզնավարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 4 արձանագրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել <<Խոզնավարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության արդյունքները:

2.Կազմակերպության ընտրված տնօրեն Վոլոդյա Զախարյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, նրան ազատելով տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

3.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2016թ.հոկտեմբերի 05
ք. Կապան